



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 մայիսի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ԴՆ ԼՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ԴՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 51 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Ն. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, հանրակրթության, մշակույթի և տուրիզմի, իրավաբանական, բնապահպանության, տրանսպորտի, կազմակերպական վարչությունների պետերը, Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Ն. Մարությանը տեղեկացրեց.

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Հռիփսիմե Առաքելյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 4-ի հ.30 արձանագրության՝ Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Հռիփսիմե Առաքելյանի մանդատը տրվել է «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Քրիստինա Վարդանյանին:

Հաշվի առնելով, որ Հռիփսիմե Առաքելյանը դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները և հանդիսանում էր ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղարը, ուստի՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության կողմից խմբակցության քարտուղար է նշանակվել Մարկոս Հարությունյանը:

Երևանի քաղաքապետ Ն.Մարությանը տեղեկացրեց, որ Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Աննա Ջավախյանը և Էդգար Բարսեղյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 4-ի հ.31 արձանագրության՝ Երևանի ավագանու «Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ՝ Աննա Ջավախյանի մանդատը տրվել է Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Վիլեն Գայֆեջյանին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 24-ի հ.32 արձանագրության՝ Երևանի ավագանու «Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ՝ Էդգար Բարսեղյանի մանդատը տրվել է Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Նարեկ Պետրոսյանին:

Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Նարեկ Պետրոսյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2021 թվականի հունիսի 22-ին, ժամը 11.00-ին:
Առաջարկն ընդունվեց:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը առաջարկեց.

Երևանի ավագանու 25.05.2021թ. նիստի օրակարգի նախագծի 19-րդ հարցը՝ «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի նախագծի 5-րդ հարց.

8-րդ հարցը՝ «Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի նախագծի 6-րդ հարց:

Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գևորգ Աճեմյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N18-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին:
6. Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
7. «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
8. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած գուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
10. «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:
11. Աղբահանության վճարի արտոնություն սահմանելու մասին:
12. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

13. «Ֆորտունա Տրեյդ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանտեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
14. «Երևանի հ.100 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:
15. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
16. «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
19. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Գևորգ Աճեմյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Իգարբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

3. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու անդամ

4. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Գևորգ Աճեմյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Լևոն Հովհաննիսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Իգարբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

4. Սերգեյ Գյոզալյան- Երևանի ավագանու անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյանը:

«Գևորգ Աճեմյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վաղաժամկետ դադարեցնել Գևորգ Հովհաննեսի Աճեմյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N18-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N18-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու անդամ

2. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N18-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 45-րդ կետից հանել «, սոցիալական աջակցություն» բառերը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N310-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN1-5 հավելվածների:

2. Որոշման 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի ճանապարհային շինարարություն, համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրերի իրականացման համար հատկացնել 2,980,959.7 հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով:»

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՄԵՑԻՆ - «Հրագրան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գ. Նազարյանը:

«Հրագրան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Հարությունյանը և Երևանի քաղաքապետի խորհրդական Դ. Ճգնավորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Հրագրան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու անդամ

2. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Հրագրան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու հայտը ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

6. ԼՍԵՑԻՆ - Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Առողջապահական համակարգում ներդրած նշանակալի ավանդի, բժշկագիտության ոլորտում երկարամյա գիտամանկավարժական գործունեության և ունեցած ձեռքբերումների համար «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչ, պատվավոր պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հովհաննես Վազգենի Սարուխանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. ԼՍԵՑԻՆ - «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ««Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 788.198.000 (յոթ հարյուր ութսունույթ միլիոն մեկ հարյուր ինսուսույթ հազար) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 788.198 (յոթ հարյուր ութսունույթ հազար մեկ հարյուր ինսուսույթ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 1000 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:

2. «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 1.938.570.000 (մեկ միլիարդ ինսուսույթ հարյուր երեսուսույթ միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) դրամ, որը կազմում է 1.938.570 (մեկ միլիոն ինսուսույթ հարյուր երեսուսույթ հազար հինգ հարյուր յոթանասուն) հատ 1000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների մասին» N604-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) N1 հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 1.2. և 1.3. ենթակետերով.

«1.2) «Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալ».

«1.3) «Երևան» ոսկե հուշամեդալ»:

2) N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12.7-րդ, 12.8-րդ, 12.9-րդ, 12.10-րդ, 12.11-րդ, 12.12-րդ, 12.13-րդ, 12.14-րդ, 12.15-րդ, 12.16-րդ, 12.17-րդ, 12.18-րդ կետերով.

«12.7. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և օտարերկրյա պետությունների քաղաքացիները՝ Երևանի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար:

12.8. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալը շրջանաձև է ուղղանկյուն կախիչով, հետևի մասում՝ ասեղային ամրակով: Դիմային մասի առաջին շրջագծում երիզված է «Էրեբունի Երևան 2800» բառերը: Երկրորդ շրջագծի կենտրոնում պատվանդանի վրա կանգնած, իշխանություն խորհրդանշող գավազանը բռնած թևավոր առյուծն է և երիզված է Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող եռանկյունիներով: Ներքևի հատվածի կենտրոնում նշված է մ.թ.ա. 782՝ շրջապատված ձիթենու տերևներով: Կախիչն իրենից ներկայացնում է Էրեբունի խորհրդանշող սիմվոլ:

12.9. Հուշամեդալը պատրաստված է ոսկեպատ արույրից:

12.10. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով պարգևատրելու որոշումը կայացնում է Երևանի քաղաքապետը:

12.11. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալը և վկայագիրը հանդիսավոր պայմաններում պարգևատրված անձին հանձնում է Երևանի քաղաքապետը:

12.12. Էրեբունի Երևան 2800-ամյակի հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում:

12.13. «Երևան» ոսկե հուշամեդալով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, ինչպես նաև կազմակերպությունները, ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվները՝ Երևանի զարգացմանը նպաստելու և ակնառու հաջողությունների համար:

12.14. «Երևան» ոսկե հուշամեդալը շրջանաձև հուշամեդալ է, որի դիմային կողմը երիզված է Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող եռանկյունիներով: Երկրորդ շրջագծի կենտրոնում Երևանի քաղաքապետարանի շենքն է (2004թ.), որի հենքը գրտառությամբ պատվանդանի վրա կանգնած, իշխանություն խորհրդանշող գավազանը բռնած թևավոր առյուծն է, իսկ շենքի գլխավերևում համայն հայության սուրբ լեռ Արարատն է: Հուշամեդալի հակառակ կողմում երիզված է եռալեզու (հայերեն, լատիներեն, ռուսերեն) գրտառության Երևան բառը: Երկրորդ շրջագծի կենտրոնում պատկերված է սեպագիր արձանագրություն, որը հավաստում է Էրեբունի ամրոցում Մուսիի տաճարի հիմնադրումը (մ.թ.ա. 782թ.):

12.15. Հուշամեդալը պատրաստված է ոսկեջրած արծաթից:

12.16. «Երևան» ոսկե հուշամեդալով պարգևատրելու որոշումը կայացնում է Երևանի քաղաքապետը:

12.17. «Երևան» ոսկե հուշամեդալը և վկայագիրը հանդիսավոր պայմաններում պարգևատրված անձին հանձնում է Երևանի քաղաքապետը:

12.18. «Երևան» ոսկե հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. ԼՍԵՑԻՆ - «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Գ. Մելքոն Մելքոնյանը և քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իզաբելլա Արգարյան-Երևանի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Համո Սահյանի անվամբ՝ «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

11. ԼՍԵՑԻՆ - Աղբահանության վճարի արտոնություն սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Աղբահանության վճարի արտոնություն սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու ժամանակ զոհված, անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված, գերեվարված զինծառայողների ընտանիքի անդամներին, ինչպես նաև 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին տրամադրել աղբահանության վճարի դրույքաչափի նկատմամբ արտոնություն՝ ազատելով մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը առկա աղբահանության վճարի պարտավորությունների և հաշվարկված տույժերի վճարումից՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Սույն որոշման իմաստով ընտանիքի անդամներ են հանդիսանում ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), տատը և պապը, եթե նրանք սույն որոշման 1-ին կետում նշված զոհվածի մահվան օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում, ինչպես նաև քույրերը և եղբայրները, եթե վերջիններս սույն որոշման 1-ին կետում նշված զոհվածի մահվան օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում և ամուսնացած չեն եղել:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

12. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքում անշարժ գույքի հարկի, հողի հարկի, շինությունների գույքահարկի, փոխադրամիջոցների գույքահարկի, հողամասերի (այդ թվում՝ այգիներում և պուրակներում) բոլոր տեսակների վարձակալության և կառուցապատման իրավունքի վարձավճարների (այդ թվում՝ տույժերի և տուգանքների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով հաշվառման, գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ, 16-րդ, 19-րդ կետերով սահմանված տեղական տուրքերը գանձելու և թույլտվություններ տալու լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի NN 9-Ա և 10-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 71-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

13. ԼՍԵՑԻՆ - «Ֆորտունա Տրեյդ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանտեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Ֆորտունա Տրեյդ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանտեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «Ֆորտունա Տրեյդ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 28, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

14. ԼՍԵՑԻՆ - «Երևանի հ.100 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Կարեն Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Երևանի հ.100 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի հ.100 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Արցախի ազատամարտի մասնակից, գրող Դավիթ Սարապյանի անվամբ՝ «Երևանի Դավիթ Սարապյանի անվան հ.100 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

15. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Կ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Կ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպություններն Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N182-Ն որոշման

հավելվածի 204.1-ին կետում «նախադպրոցական ուսումնական հաստատություն» բառերը փոխարինել «մանկապարտեզ» բառով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

16. ԼՍԵՑԻՆ - «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

2. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Գ. Մելքոն Մելքոնյանը և քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

2. Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը, քաղաքապետի խորհրդական Դ. Ճգնավորյանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ն. Տիգրանյան փողոցի հ.հ.16 և 16/1 հասցեներում գտնվող Արամ, Արմեն, Աշոտ Նահապետյանների և Հարություն Բերբերյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 9180.0քմ մակերեսով հողամասի նպատակային

նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 24, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

18. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

2. Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սերգեյ Գյոզայան- Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը, քաղաքապետի խորհրդական Դ. Ճգնավորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցի հ.6 հասցեում գտնվող 20000.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 23, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

19. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ն.Ադոնցի փողոցի հ.19/9 և հ.19/15 հասցեներում գտնվող «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 3330.1քմ և 972.9քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 20, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Հ. ՄԱՐԳՍՅԱՆ